



Այս համարում՝

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ՀԻՄՆԱԴՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քաղաքացիական հասարակությունը ներկայացնում է գեկույց ԵՀՔ իրականացման վերաբերյալ
- ՀԿ-ները ներկայացնում են եռամյա ծրագրի նվաճումները
- ՀԿԿԱ-ն մասնակցում է Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 54-րդ նստաշրջանին Նյու Յորքում
- Մարիամ Մուխոտյանին առաջադրված քրեական մեղադրանքները հանվել են
- Սահմանադրական դատարանը բավարարում է «Մելտերս» ՄՊԸ-ի հայցը
- Ուսումնասիրությունը գնահատում է ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը լրատվամիջոցների վրա
- Հետազոտություն քվայնացման վերաբերյալ՝ հնարավորությունների և ռիսկերի գնահատման նպատակով
- «Ինտերակտիվ»-ը Հանրային հեռուստատեսության 10 ամենասիրված հաղորդումներից մեկն է
- «Թեղուտ. գավակների հացը» ֆիլմի շնորհանդեսը
- «Վերադարձ դեպի Եվրոպա» ֆիլմաշարը «Երկիր մեղիա»-ի երեքում

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Պացիենտների իրավունքների միջազգային ստանդարտները ներկայացվում են առողջապահության ու մարդու իրավունքների ոլորտների մասնագետներին
- Մեքսիկայի փոխարինող բուժումը հաջողվում է

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Երեխաների իրավունքների մասին իրազեկության բարձրացում համայնքներում
- Դեպի բարելավված կրթակարգի մշակում

ՀԱՎԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- Կրթաթոշակ մասնագիտական կրթություն ստացող կարիքավոր ուսանողների համար
- Մաքուր փողոցներ Լեռնագոգ գյուղում
- Փոքր դրամաշնորհներ գյուղացիական կոոպերատիվներին

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀԿ-ները ներկայացնում են եռամյա ծրագրի նվաճումները

Մարդու իրավունքների ոլորտում ներգրավված ՀԿ-ների հզորացման եռամյա ծրագրի հիմնական արդյունքներն ամփոփող համաժողովին ներկա էին կառավարության, դեսպանությունների, կրոնական, տեղական և միջազգային կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների շուրջ 120 ներկայացուցիչներ: Նիդեռլանդների կառավարության կողմից համաֆինանսավորվող ՀԿ-ների հզորությունների մեծացման այս եռամյա ծրագրի հիմնական նպատակը Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի բարելավումն էր՝ ընտրված վեց ՀԿ-ների ինստիտուցիոնալ և շահապաշտպան հզորությունների ընդլայնման միջոցով (այս ՀԿ-ներից յուրաքանչյուրի գործունեության մասին տեղեկություններ կարող եք գտնել «Գործունեության լրաքաղ»-ի առաջին թողարկման մեջ, տես՝ http://www.osi.am/newsletters/Nov2009-Jan2010_ENG.pdf):

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՐԱՔԱԴ

ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական հասարակությունը ներկայացնում է գեկույց ԵՀՔ իրականացման վերաբերյալ

2010թ. մարտին «Գործընկերություն հանուն բաց հասարակության» (Գործընկերություն) նախաձեռնությունը մեծ լսարանի առջև ներկայացրեց իր տեսակետները 2009թ. Հայաստանում Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) իրականացման վերաբերյալ: Միջոցառմանը հրավիրված էին պետական պաշտոնյաներ, ԵՄ երկրների դեսպաններ, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Քաղաքացիական հասարակության ու միջազգային կազմակերպությունների միջև ակտիվ քննարկում տեղի ունեցավ, մասնավորապես՝ լրատվամիջոցների ու դատաիրավական ոլորտների զարգացումների շուրջ: Ցավոք, կառավարությունը միջոցառմանը բավարար կերպով ներկայացված չէր, ու քանի որ միջոցառումը նպատակ ուներ քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռել երկխոսություն ունենալու կառավարության հետ ԵՀՔ իրականացման, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ասպարեզում երկրում առկա խնդիրների ու դրանց հետ կապված քաղաքացիական հասարակության առաջարկների շուրջ, ապա այդ մասով կարելի է փաստել, որ միջոցառումը ձախողվեց:

Ավելի վաղ գեկույցը ներկայացվել էր Բրյուսելում (Բելգիա) եվրոպական դիվանագետների հետ հանդիպումներում (մասնաամասների համար տես՝ «Գործունեության լրաքաղ»-ի առաջին թողարկումը՝ http://www.osi.am/newsletters/Nov2009-Jan2010_ENG.pdf):

Հայաստանում ԵՀՔ իրականացման վաղ փուլերից սկսած Գործընկերությունը խթանել և օժանդակել է այդ գործընթացին: Մա արդեն երրորդ գեկույցն է, որ ԵՀՔ գործողությունների ծրագրի ընթացքի վերաբերյալ ներկայացվում էր Գործընկերության անդամների ու փորձագետների կողմից՝ Հիմնադրամի աջակցությամբ: ■



ՀԿ-ները ներկայացնում են Հիմնադրամի և Նիդեռլանդների կառավարության կողմից ֆինանսավորված եռամյա ծրագրի նվաճումները փետրվարի 19, 2010թ.



«Ինտերակտիվ»-ը Հանրային հեռուստատեսության 10 ամենասիրված հաղորդումներից մեկն է

Վարկանիշային գնահատմամբ «Բանաձև» ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների մասին «Ինտերակտիվ» հաղորդաշարը, որն օժանդակվում է Հիմնադրամի կողմից, տեղ է գտնել Հանրային հեռուստատեսության ամենասիրված 10 հաղորդումների շարքում: «Ինտերակտիվ»-ը եզակի հաղորդաշար է, որն անդրադառնում է այնպիսի կարևոր թեմաների, ինչպիսիք են հայկական ներկայությունը վեր միջավայրում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վերաբերյալ նորությունները Հայաստանում և արտերկրում: Ծրագրի հեռարձակումն սկսվել է 2010թ. հունվարից, և այն արդեն իսկ ունի մեծ հեռուստալսարան: Հեռարձակվում է շաբաթ օրերին ժամը 16:30-ին Հանրային հեռուստատեսության եթերով:»



«Ինտերակտիվ»-ի հաղորդավարներ Մանու Իրիցյանը և Արտյոմ Լևոնյանը

Ուսումնասիրությունը գնահատում է ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը լրատվամիջոցների վրա

Հունվարին ԲՀԻ Ջանգվածային լրատվամիջոցների ծրագիրն ավարտեց լրատվամիջոցների վրա ու լրատվությունը հասարակությանը հասանելի դարձնելու հարցում ֆինանսական ճգնաժամի ազդեցության մասին ուսումնասիրությունը, որն իրականացվել էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ-ի 18 երկրներում: Հայաստանում իրավիճակի վերլուծությունը կատարվել էր Հայաստանի հետաքննող լրագրողների ասոցիացիայի կողմից:

«Ճգնաժամի արդյունքում գովազդային եկամուտների կրճատման և լրատվամիջոցների սպառողների գուտ եկամուտների նվազեցման հետևանքով լրատվամիջոցները ներկայացնում են մակերեսային և առավել սենսացիոն նյութերի լուսաբանումներ ու դարձել են առավել խոցելի քաղաքական ճնշումների տեսանկյունից», - նշում է ԲՀԻ Լրատվամիջոցների ծրագրի խորհրդատու Ռիտա Ռուդուսան՝ ամփոփելով ուսումնասիրության արդյունքները: «Չնայած զանգվածային լրատվամիջոցների շուկայի կայացվածության աստիճանը, ինչպես նաև ճգնաժամի խստությունը ուսումնասիրության մեջ ներառված երկրներում տարբերվում են, այնուհանդերձ ամբողջ տարածաշրջանում դիտարկվում են հիմնականում նույն միտումները. թուլացած զանգվածային լրատվամիջոցները ավելի քիչ հնարավորություններ ունեն իրենց ժողովրդավարական գործառնությունը կատարելու և հսկելու քաղաքական գործիչներին ու երկրի կառավարման իշխանական լծակները տնօրինող պաշտոնյաներին», - ավելացնում է նա:

Առանձին երկրների մասին զեկույցները, այդ թվում և Հայաստանի մասին զեկույցը կարող եք գտնել http://www.soros.org/initiatives/media/articles_publications/publications/financial-crisis-media-20091201 էջում:»

Հետազոտություն թվայնացման վերաբերյալ՝ հնարավորությունների և ռիսկերի գնահատման նպատակով

Աշխարհով մեկ լրատվամիջոցները ակնհայտաբար ու կրողն են բազմաթիվ համընդհանուր փոփոխությունների, մասնավորապես՝ անցում անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման, նոր լրատվական հենքի ձևավորում և զարգացում, ավանդական հեռարձակման և հեռահաղորդակցության ասպարեզի սերտաճում: ԲՀԻ Լրատվամիջոցների ծրագիրը Տեղեկատվական ծրագրի հետ միասին մշակել է մի մեթոդաբանություն, որը թույլ կտա գնահատել լրատվամիջոցների համար առկա գլոբալ հնարավորություններն ու ռիսկերը, որոնք բխում են վերոհիշյալ զարգացումներից: Ազգային փորձագետների ու գործընկեր կազմակերպությունների մասնակցությամբ նախագիծն արդեն իսկ ընթացքի մեջ է Հայաստանում, Թայլանդում Իտալիայում, Մեքսիկայում, Մոլդովայում, Նիգերիայում, Ռումինիայում և Սերբիայում: Երկրների մասին զեկույցները կիրառվեն 2010թ. հուլիսին և հասանելի կլինեն առցանց www.mediapolicy.org կայքում: Նույն մեթոդաբանության կիրառմամբ այսպիսի հետազոտություն կիրականացվի ևս 40 երկրներում:»

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀԿԿԱ-Ն մասնակցում է Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 54-րդ նստաշրջանին Նյու Յորքում

Հիմնադրամի օժանդակության շնորհիվ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի (ՀԿԿԱ) նախագահ Ջեմմա Հասրաթյանը և ՀՀԿԱ Գեներալային հետազոտությունների կենտրոնի փորձագետ Վլադիմիր Օսիպովը մարտին մասնակցեցին ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 54-րդ նստաշրջանին: Երևանից մասնակիցները նախարարների և ակտիվիստների հետ միասին հավաքվել էին Նյու Յորքի ՄԱԿ-ի կենտրոնակայանում՝ քննարկելու այն առաջընթացը, որը տեղ էր գտել 1995թ. կանանց հարցերով 4-րդ համաշխարհային համաժողովի ընթացքում ընդունված Պեկինյան հռչակագրի ու գործողությունների ծրագրի ընդունումից հետո, մի փաստաթուղթ, որ թերևս սահմանում է գեներալային հավասարության, զարգացման ու խաղաղության նպատակներին հասնելու համընդհանուր քաղաքականության ամենամտաբողջական շրջանակը: Մասնակից պետական պաշտոնյաները, քաղաքացիական հասարակության ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներն անդրադարձան իրենց փորձին, ներկայացրեցին

հաջողությունները և քննարկեցին այն գերակա գործողությունները, որ պետք է ձեռնարկվեն տևական խոչընդոտներն ու նոր մարտահրավերները հաղթահարելու համար:

«54-րդ նստաշրջանի տասն օր տևած լիազումար նիստերի ու կլոր-սեղան քննարկումների ընթացքում մենք կարողացանք ծանոթանալ այն խնդիրներին, որ վերաբերում են կայուն զարգացման գործընթացներում կանանց ունեցած դերին ու աշխարհում գեներալային հավասարության ապահովմանը: Նաև բացառիկ հնարավորություն էր տեսնել, թե Պեկին +15 գործընթացում որտեղ է գտնվում մեր երկիրը», - ասում է Ջ. Հասրաթյանը: «Իհարկե ցավալի է, որ մեր հաջողությունները համեստ են համեմատած ոչ միայն Եվրոպայի, այլ նաև Ասիայի, Լատինական Ամերիկայի ու Աֆրիկայի երկրների հետ: Միայն նպատակային ու հավասարակշռված գեներալային քաղաքականությունը կօգնի մեզ տեղ գրավել զարգացած երկրների շարքում», - հավելում է նա:

Վերադառնալուց հետո Հասրաթյանը և Օսիպովը կազմակերպեցին կլոր-սեղան քննարկումներ Վանաձորում և Գյումրիում՝ ներկայացնելու ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի արդյունքները բազմաթիվ ՀԿ-ների ու այլ շահագրգիռ անձանց:



ՀԿԿԱ նախագահ Ջ.Հասրաթյանը Նյու Յորքում՝ Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 54-րդ նստաշրջանում, մարտ, 2010թ.



ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Մեթադոնային փոխարինող բուժումը հաջողվում է

«Մեթադոնային փոխարինող բուժումը ցավը մեղմելու ու բուժելու լավագույն տարբերակն է», - ասում է Արթուր Պոտոսյանը «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք» ՀԿ-ից: Վերջին հաջողված դեպքերից է 38-ամյա երիտասարդի օրինակը, ով մեթադոնային փոխարինող բուժման համար գրանցվել է 2009թ. նոյեմբերին և ամեն օր ստանում է մեթադոնային փոխարինիչ ու սոցիալ-հոգեբանական աջակցություն: Նախքան գրանցվելը նա գտնվում էր օփիոիդային խիստ կախվածության մեջ, և օփիոիդային թրմամիջոցներից հրաժարվելու մի քանի փորձեր ձախողվել էին: Յոթ տարի շարունակ օփիոիդների օգտագործելու արդյունքում դարձել էր հեպատիտ C-ի և ՄԻԱՎ վարակակիր: Նա կորցրել էր ամեն ինչ՝ աշխատանքը, ընտանիքի ու հարազատների վատախոսությունը և հայտնվել

էր մեկուսացված վիճակում: Այս երիտասարդի ներգրավումը ծրագրում դրական տեղաշարժ ապահովեց նրա կյանքում և վարքագծում: Նրա մոտ գրանցվել է թե ֆիզիկական վիճակի, և թե սոցիալական գործառույթների զգալի բարելավում: Ավելին, հոգեվիճակի կայունացմանը զուգընթաց նա սկսել է առողջական իր մյուս խնդիրներով զբաղվել: Այժմ նա ցանկանում է նոր հմտություններ ձեռք բերել և աշխատանքի տեղավորվել:

Մեթադոնային բաժանմունքը հիմնվել է ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժության բժշկական կենտրոնին առընթեր նարկոլոգիական կլինիկայում 2009թ. սեպտեմբերի 29-ին՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի և Վնասի նվազեցման զարգացման միջազգային ծրագրի օժանդակությամբ:»

Պացիենտների իրավունքների միջազգային ստանդարտները ներկայացվում են առողջապահության ու մարդու իրավունքների ոլորտների մասնագետներին

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ՀԲԱՎ), «Պացիենտների իրավունքներ», «Հանրային առողջության և սոցիալական իրավունքների պաշտպանության գիտագործնական կենտրոն» և «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք» ՀԿ-ները մարտին ավարտեցին ԲՀԻ ռեսուրսային ուղեցույցի հիման վրա կազմակերպված դասընթացների շարքը պացիենտների իրավունքների միջազգային ստանդարտների վերաբերյալ: Դասընթացները, որ նախատեսված էին առողջապահության ու մարդու իրավունքների ոլորտի մասնագետների համար, անցկացվեցին Երևանում, Շիրակի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերում: Դասընթացների նպատակն էր մասնագետների շրջանում բարձրացնել պացիենտների իրավունքների ու դրանց պաշտպանության մեխանիզմների մասին իրազեկվածությունը:

Դասընթացներն օգնեցին վերահանել առողջապահության ոլորտում գոյություն ունեցող մի շարք խնդիրներ, որոնք դասակարգվեցին ըստ այն իրավունքների խմբերի, որոնք ներկայացված

են Պացիենտների իրավունքների մասին եվրոպական խարտիայում: Որպես հետագա քայլ նախատեսվում է իրականացնել պացիենտների մարդու իրավունքների իրավիճակի մոնիտորինգ՝ դասընթացներին մասնակցած մասնագետների ներգրավմամբ: Մոնիտորինգի արդյունքում մշակված առաջարկները կներկայացվեն Առողջապահության նախարարությանը:



Վերապատրաստում ՀԲԱՎ-ի կողմից առողջապահության և մարդու իրավունքների ոլորտների մասնագետների համար, Վանաձոր, մարտի 10, 2010թ.

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական դատավարության ծրագիրը Հիմնադրամի գործառնական ծրագիրն է 2008թ.-ից: Ծրագիրը փորձում է իրավաբանների և քաղաքացիական հասարակության ջանքերն ուղղել իրավունքների ոտնահարման խնդիրները լուծելուն: Այս տարիների ընթացքում ծրագիրը զարգացում է ապրել և զբաղվում է բոլոր մակարդակներում (վերաբննիչ դատարան, Սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական դատարան) քննվող գործերով:

Սահմանադրական դատարանը բավարարում է «Մելտեքս» ՍՊԸ-ի հայցը

2010թ. փետրվարի 23-ին Սահմանադրական դատարանը վերահաստատեց իր նախկին որոշումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204²⁸ հոդվածի 1-ին մասը հակասահմանադրական ճանաչելու մասին: Այս հոդվածը հիմք էր ծառայել վճարել դատարանի համար՝ «Մելտեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցի ընդունումը մերժելու համար: Դատարանը շեշտեց, որ բոլոր այն որոշումները, որտեղ հակասահմանադրական նորմեր են կիրառվել, պետք է չեղյալ հայտարարվեն և վերստին վարույթ պետք է սկսվի: Սահմանադրական դատարանը վերահաստատեց, որ ընկերությունը և վճարել դատարանի որոշումներից տուժած այլ քաղաքացիները պետք է վերականգնեն վճարել դատարանին վերանայման հայց ներկայացնելու իրենց իրավունքները:

Սահմանադրական դատարանը նաև նշել էր, որ ՀՀ ազգային ժողովը (ԱԺ) շարունակաբար թերացել է Սահմանադրական դատարանի որոշումներին հետևելու հարցում՝ չկատարելով համապատասխան փոփոխություններ օրենքներում: Մրա փոխարեն, որոշ դեպքերում ԱԺ-ն փոփոխություններ է կատարել այնպիսի օրենքներում, որոնք Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական են ճանաչվել: Երբ 2008թ. հուլիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մելտեքս» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» հայցի վերաբերյալ ընկերության օգտին որոշում կայացրեց: «Մելտեքս» ՍՊԸ-ն այդ որոշումը ներկայացրեց վճարել դատարան, որպեսզի այն վերսկսի վարույթը և վերանայի նախկին որոշումները: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշել էր, որ Հեռուստատեսու-



թյան և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) խախտել է ընկերության Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված իրավունքները՝ չկարողանալով հիմնավորել արտոնագրման յոթ մրցույթներում ընկերությանը հեռարձակման արտոնագիր ստանալու համար ներկայացված հայտերը մերժելու իր որոշումները: Դատարանը որոշեց, որ ՀՌԱՀ-ի կողմից անցկացված մրցույթների եղանակը չի համապատասխանել կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «օրինակաճանության» սկզբունքի պահանջներին:

Հայաստանն ընդունել է Եվրոպական դատարանի պարտադիր ընդդատությունը 2002թ. ապրիլին: Դրանից հետո Սահմանադրական դատարանը կայացրել է մոտ 40 որոշում՝ մի շարք օրենսդրական նորմեր հայտարարելով հակասահմանադրական: տես էջ 5

4 էջ-ի շարք. «Բացառությամբ մի քանի որոշումների, որոնցում տեղական դատարանն ընդունել է, որ խախտվել են արդար դատավարության իրավունքները՝ Եվրոպական կոնվենցիայի կամ Սահմանադրության համաձայն, մեծամասամբ Եվրոպական դատարանի կամ Սահմանադրական դատարանի որոշումները չեն կատարվել», - ասաց 2002թ.-ից ի վեր «Մեկտեքս» ՄՊԸ-ի շահերը ներկայացնող փաստաբան Արա Ղազարյանը: «Կատարման գործընթացը հիմնականում արգելափակվում է վճարեկ դատարանի՝ ընդհանուր իրավասության բարձրագույն դատարանի կողմից, որը արդյունավետորեն մերժում է հայցերի ընդունումը: Ավելին, Ազգային ժողովը շարունակաբար թերահամու է համապատասխան փոփոխություններ կատարել կամ չեղյալ հայտարարել Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված համապատասխան դրույթները, որոնց արդյունքում Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի որոշումները անհետևանք են մնացել», - ավելացրեց փաստաբանը:»

Մարիամ Սուխուդյանին առաջադրված քրեական մեղադրանքները հանվել են

Մեկ տարի տևող նախաքննությունից հետո բնապահպանական հարցերով ակտիվիստ Մարիամ Սուխուդյանին առաջադրված քրեական մեղադրանքները հանվեցին: Սուխուդյանը այն ակտիվիստներից մեկն էր, որ հրապարակավ անդրադարձավ Երևանի արվարձաններից մեկում՝ Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցում երեխաների շահագործման և նրանց հանդեպ սեռական ոտնձգությունների խնդրին: Սուխուդյանին առաջադրվել էր «կեղծ մատնության» մեղադրանք, որ պատժվում է

մինչև 5 տարի ազատազրկմամբ, ապա մեղադրանքը մեղմացվել էր և փոխարինվել «գրպարտությամբ», որի համար որպես պատիժ սահմանվում են մեծ տուգանքներ և մինչև երեք տարի ազատազրկում: Ռազմավարական դատավարության ծրագրի օժանդակությունն ունեցող իրավաբանների թիմի ջանքերն ուղղված էին ապահովելու, որ ակտիվիստին առաջադրված երկու մեղադրանքներն էլ հանվեին և իրականացվեր գործի անկողմնակալ և օբյեկտիվ նախաքննություն: Դպրոցի սաների նկատմամբ անառակաբար գործողություններ թույլ տալու մասին տեղեկությունների հրապարակումից գրեթե մեկ տարի անցավ, մինչև գործ հարուցվեց/քննություն սկսվեց ենթադրյալ մեղավորի դեմ (հատուկ դպրոցի նախկին ուսուցիչ):»



Մարիամ Սուխուդյանը Էրեբունու ոստիկանատանը հարցաքննման ենթարկվելուց հետո, օգոստոս, 2009թ.


ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երեխաների իրավունքների մասին իրազեկության բարձրացում համայնքներում

Մարտ ամսին Երևանի թիվ 198 դպրոցում գործող Եվրոպական ակումբը ոչ պաշտոնական հարցում անցկացրեց՝ պարզելու համար, թե դպրոցականները և համայնքի անդամներն ընդհանրապես տեղեկացված են երեխաների իրավունքների մասին, թե ոչ: «Մարդկանց մեծամասնությունը հարցերի մեծ մասին ճիշտ է պատասխանել,» - ասաց Լիանա Փափազյանը, ով համակարգում է ակումբի աշխատանքները: «Սակայն շատերն ընդունել են, որ շատ հաճախ նույնիսկ չեն գիտակցում, որ որոշակի գործողություններով իրենք ոտնահարում են իրենց սեփական երեխաների իրավունքները»: Ակումբի աշխատանքներում ներգրավված դպրոցականները նույնպես պատրաստել և տարածել են տեղեկատվական թերթիկներ երեխաների իրավունքների մասին:

Եվրոպական ակումբները 2007թ. ստեղծվել են Հիմնադրամի աջակցությամբ Երևանի, Իջևանի, Սուրենավանի, Մեծամորի, Հրազդանի, Գյումրու և Վանաձորի ութ դպրոցներում: Հիմնադրամն աջակցել է այս դպրոցներին այդ ժամանակվանից ի վեր: Ակումբների օժանդակությամբ իրականացվող նախաձեռնությունները հատուկ կարևորություն են տալիս քաղաքացիական և մարդու իրավունքների ուսուցանման ու քաղաքացիական ակտիվության, հասարակական հիմունքներով գործունեության և այլ հարցերին:

ԲՀԻՕՀ հայաստանյան մասնաճյուղը կարևորում է եվրաինտեգրումը և ձգտում է Հայաստանի հանրակրթական համակարգը մոտեցնել եվրոպականին՝ օժանդակելով մի շարք նախաձեռնությունների, ինչպիսիք են, օրինակ, Եվրոպայի, դրա արժեքների ու կառույցների, պատմության և մշակույթի վերաբերյալ իրազեկության բարձրացումը հատկապես երիտասարդության շրջանում:»



Դպրոցականները հարցում են անցկացնում երեխաների իրավունքների վերաբերյալ, մարտ, 2010թ.

Դեպի բարելավված կրթակարգի մշակում

«Կոմպետենցիաների վրա հիմնված բազմափուլ դասընթացների ծրագրերի մեթոդաբանության մշակում» ծրագրի արդյունքում մշակվել է «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում» մեթոդական ուղեցույց բուհերի համար, որն իրականացվել է «Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ-ի կողմից:

Ծրագրի իրականացման ընթացքում արդյունքի վրա հիմնված ծրագրեր մշակելու մեթոդաբանությունը ներկայացվել է Հայաստանի չորս բուհերում՝ Երևանի պետական համալսարան, Երևանի պետական լեզվաբանական համալսարան, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի կողմից և առաջարկվել է Հայաստանի բուհերին այն օգտագործել որպես ուղեցույց: Ձեռնարկը կտպագրվի «National Tempus» գրասենյակի ֆինանսավորմամբ:■




«Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչներ Սամվել Կարաբեկյանը և Արմեն Բուդաղյանը «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում» մեթոդական ուղեցույցը ներկայացնելիս, Գյումրի, դեկտեմբեր, 2009թ.

ԱՐՎԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

«Թեղուտ. զավակների հացը» ֆիլմի շնորհանդեսը

Ռեժիսոր Տ. Պասկևիչյանի «Թեղուտ. զավակների հացը» ֆիլմի շնորհանդեսը տեղի ունեցավ 2010թ. փետրվարի 20-ին Փոքր թատրոնի դահլիճում: Ֆիլմը պատրաստվել էր Հիմնադրամի աջակցությամբ՝ որպես ավելի մեծ ծրագրի մաս, որն իրականացվում է «Էկոդար» ՀԿ-ի կողմից և ուղղված է բարձրացնելու քաղաքացիների իրազեկությունը մաքուր միջավայրում ապրելու իրենց իրավունքի և Հայաստանի բնապահպանական իրավիճակի մասին: Ծրագրի նպատակն է բարձրացնել հանրության իրազեկությունը Թեղուտի անտառահատումների և անտառների վերացման հետևանքով առաջացած էկոլոգիական վտանգների մասին:■



«Վերադարձ դեպի Եվրոպա» ֆիլմաշարը Երկիր մեդիայի եթերում

2010թ. փետրվարին Հիմնադրամն աջակցություն ցուցաբերեց «Վերադարձ դեպի Եվրոպա» ֆիլմաշարի թարգմանության հարցում: Ֆիլմերը հեռարձակվում են «Երկիր մեդիա» հեռուստատեսությամբ ամեն ուրբաթ ժամը 21.15-ին: Քննարկումները համապատասխան փորձագետների հետ կազմակերպվում են ամեն շաբաթ օր ժամը 22.00-ին:

«Վերադարձ դեպի Եվրոպա» ֆիլմաշարը նկարահանվել է 2008թ. Եվրոպական կայունության նախաձեռնության կողմից՝ Austrian ORF TV and ERSTE Stiftung ընկերությունների հետ համատեղ: Մրանք ֆիլմեր են Հարավ-արևելյան Եվրոպայի (Հունաստան, Թուրքիա, Մոնտենեգրո, Ռումինիա, Սերբիա, Բոսնիա, Կոսովո, Ալբանիա, Մակեդոնիա), վերջին տասնամյակում նրանց քաղաքական, սոցիալական, տնտեսական կյանքի, ժողովրդավարացման և եվրոպականացման առաջընթացի վերաբերյալ:

Ֆիլմաշարը 2008թ արժանացել է Erasmus Euro Media մրցանակի: Իտալիայի նախկին վարչապետ Ջիուլիանո Ամատոն ասաց, - «Մրանք վավերագրական ֆիլմեր են, որոնք Եվրոպական Միության բոլոր քաղաքացիները պետք է տեսնելու հնարավորություն ունենան»: Իսկ Ընդլայնման հարցերով եվրոպական հանձնակատար Օլիվիա Ռեհնը ավելացրել է, որ սա «համոզիչ փաստագրական ֆիլմերի շարք է Բալկանների և Թուրքիայի մասին, որ ներկայացնում է արագ փոփոխվող տարածաշրջանի բնույթը, որը էապես կարևոր գործոն է ապագա Եվրոպայի համար»:■

Մաքուր փողոցներ Լեռնագոգ գյուղում

Հակաճգնաժամային հիմնադրամը տրամադրել է 24500 ԱՄՆ դոլարի օգնություն Արմավիրի և Արագածոտնի մարզի սոցիալապես անապահով գյուղաբնակներին՝ հիմնական սննդի և բժշկական կարիքների համար (մանրամասների համար տես «Գործունեության լրաքաղ»-ի առաջին թողարկումը՝ http://www.osi.am/newsletters/Nov2009-Jan2010_ENG.pdf):



Համայնքի օր Լեռնագոգ գյուղում, մարտի 3, 2010թ.

Լեռնագոգի գյուղապետը ողջունեց գյուղում ծրագրի իրականացումը՝ պայմանով, որ ծրագրի շահառուները իրենց կողմից ինչ-որ մի լավ բան անեն ի շահ իրենց համայնքի: Գյուղապետը մարտի 3-ը գյուղում հայտարարեց համայնքի օր: Շահառու ընտանիքները հավաքվեցին՝ մաքրելու գյուղի փողոցները: Աշխատանքի մասնակիցների թիվը հետզհետե մեծացավ, երբ իրենց գյուղը աղբից մաքրելու համար ծրագրի շահառու ընտանիքներին միացան համայնքի մյուս բնակիչները:■



Մյասնիկյան գյուղի շահառուները սննդի ծանրոցներ են ստանում, փետրվար, 2010թ.

Փոքր դրամաշնորհներ գյուղացիական կոոպերատիվներին

Ֆինանսական ճգնաժամի հետևանքով գյուղատնտեսության ոլորտում ծագած խնդիրներին աջակցելու նպատակով Հիմնադրամի և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի կողմից հայտարարված հակաճգնաժամային դրամաշնորհի մրցույթի արդյունքում գյուղացիական 10 կոոպերատիվների կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Մոտ 500 գյուղացիներ և նրանց ընտանիքները կօգտվեն ծրագրից: Ծրագրի ընդհանուր արժեքն է 50000 ԱՄՆ դոլար, որտեղ հավասարաչափ կերպով հատկացումներ են կատարել Ջինիշյանի հիշատակի հիմնադրամը և ԲՀԻ օժանդակության հիմնադրամը:■

Կրթաթոշակ մասնագիտական կրթություն ստացող կարիքավոր ուսանողների համար

Հակաճգնաժամային հիմնադրամի շնորհիվ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրն ընդլայնեց կրթաթոշակների տրամադրումը մասնագիտական կրթություն ստանալու համար: Կոնկրետ այս ծրագրի թիրախը Տավուշի մարզի մասնագիտական կրթական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող 50 կարիքավոր ուսանողներն են: Կրթաթոշակը թույլ կտա թիրախ հանդիսացող ուսանողներին ձեռք բերել մասնագիտացում՝ որպես հետագա աշխատանքի և եկամտի ձեռքբերման գրավական: Ծրագիրն իրականացվում է Հիմնադրամի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համաֆինանսավորմամբ՝ համապատասխանաբար 13108 ԱՄՆ դոլար և 7705 ԱՄՆ դոլար հատկացումներով:■

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մրցույթին մասնակցելու հրավեր

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (ԲՀԻՕՀՀՄ) իր Քաղաքացիական հասարակություն ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ Հայաստանում մարդու իրավունքների բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների համար: Մրցույթի նպատակն է օժանդակել հասարակական կազմակերպություններին՝ հզորացնելով և զարգացնելով իրենց իրավապաշտպան կարողությունները մարդու իրավունքների և խոցելի խմբերի շահերի պաշտպանության (advocacy) ոլորտում:

Մրցույթի առաջին փուլում ակնկալվում է հետաքրքրվածության նախնական հայտ-նամակների (letter of interest) ընդունում: ՀԿ-ները, մինչև 3 էջ հետաքրքրվածության նախնական հայտ-նամակում, պետք է հակիրճ նկարագրեն կազմակերպության առնվազն վերջին մեկ տարվա ունեցած փորձն ու գործունեությունը, խնդիրները որոնց պետք է անդրադարձ կատարվի, առաջարկվող լուծումները՝ իրենց մեթոդոլոգիայի նկարագրությամբ, ինչպես նաև կազմակերպության մոտակա ծրագրերը՝ նշելով թե համապատասխան ֆինանսական օժանդակության դեպքում ինչ ձեռքբերումների կհասնեն շահերի պաշտպանության ոլորտում:

Առաջարկվող գաղափարները պետք է ուղղված լինեն.

- նպաստելու մարդու իրավունքների գաղափարների տարածմանը հասարակության լայն շերտերում
- բարձրացնելու տեղեկացվածությունը մարդու իրավունքներին առնչվող խնդիրների և վերջինիս

պաշտպանության շուրջ - ամրապնդելու համագործակցությունը մարզային և մայրաքաղաքային հասարակական կազմակերպությունների միջև:

Հայտ- նամակներում վերհանված խնդիրները կարող են ներառել բայց չսահմանափակվել երեխաների, հատուկ կարիքներով մարդկանց, փոքրամասնությունների, կանանց և հասարակության այլ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը:

Նախապատվություն կտրվի երիտասարդ, այլ կազմակերպությունների հետ համագործակցություն ապահովող, համաֆինանսավորում ունեցող և գործունեության մեջ երիտասարդներ ընդգրկող կազմակերպություններին, որոնք հանդես կգան վերնշված ոլորտներում առկա խնդիրների լուծման նորարարական գաղափարներով:

Հետաքրքրվածության նախնական հայտ-նամակների հիման վրա ընտրված ՀԿ-ներին կառաջարկվի ներկայացնել առավել մանրամասն մշակված ծրագիր՝ մինչև 12 ամիս տևողությամբ: Մրցույթի վերջնական հաղթողներին կտրամադրվի դրամաշնորհ՝ միջինը 8.000 - 10.000 ԱՄՆ դոլար:

Հետաքրքրվածության նախնական հայտ-նամակները պետք է ներկայացվեն ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակ հայերեն կամ անգլերեն կամ ռուսերեն լեզուներով տպագիր և էլեկտրոնային տարբերակներով մինչև ապրիլի 30-ը ժամը 17.00:

ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակի հասցեն է՝ Երևան, Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, տուն 7/1, էլ. փոստի հասցեն՝ register@osi.am և laura@osi.am

Հավելյալ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել Լաուրա Գևորգյանին +374010 53 38 62, +374010 53 67 58 հեռ. կամ էլ. փոստով՝ laura@osi.am:

Գլոբալ հավելյալ դրամաշնորհային ծրագիր

Բաց հասարակության ինստիտուտի Ֆանցային կրթաթոշակային ծրագիրը հայտարարում է մրցույթ 2010-2011 ուսումնական տարվա համար: Մրցույթին կարող են մասնակցել Եվրոպայի, Միջին/Մերձավոր Արևելքի, Ասիայի, Ավստրալիայի և Հյուսիսային Ամերիկայի համալսարաններում հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում դոկտորական ծրագրերով սովորող ուսանողներ, որոնք ունեն մասամբ ֆինանսավորում: Ընտրությունը կատարվելու է գիտական նվաճումների և ֆինանսական աջակցության անհրաժեշտության հիմունքով: Եվրոպայում ուսասողների դիմումները ընդունվում են մինչև 2010թ. հունիսի 10-ը: Դիմողները կարող են դիմել այցելելով հետևյալ կայք. <http://www.soros.org/grants/oas>. Դիմումի ձևի և լրացուցիչ տեղեկությունների համար այցելել http://www.soros.org/initiatives/scholarship/focus_areas., կամ դիմել ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակ, Աննա Գևորգյանին, հեռ՝ +374010 53 38 62, էլ. փոստ՝ anna@osi.am, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան փ, 2 փակուղի, տուն 7/1:

Հասցե՝ Թումանյան փ.2-րդ փակուղի, տուն 7/1
Երևան 0002, Հայաստան
Հեռ./Ֆաքս՝ +37410 533862, 536758
Էլ. փոստ՝ info@osi.am
Վեբ կայք՝ www.osi.am, www.partnership.am

